

յանձնութեած բարեկարգութիւն և միջնա ժամանակական պահանջանքները

## ԳՐԱԿԱՆ

Ապօպեսիամեն քայլ՝ բայարձէ մայասով թրաքառ

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### Պ Ռ Ո Ռ Ե Թ Ե Ի Ս

Խորապես պարզացած մուլտ

(Մենախօսութիւն)

Ո՞հ, տառապանք, անհուն, անվերջ տառապանք...

Սանդարձմետ և իւր բոլոր արհաւիրք

Զեն հաւասար իմ անվախճան ցաւելին:

Վկայ եղէք տանջանքներիս, ովկիան,

Լուսին, արև, և գուք, աստղեր ժպտադէմ,

Լեռներ, գետեր, համայն տարերք աշխարհի.

Վկայ եղէք անգութ Զեսի չարութեան:

Տեսէք, ինչպէս հայրն աստուածոց և մարդկան

Տանջում է ինձ վրէժինդրութեամբ անիրաւ,

Դահիճս ահա շուտով գարձեալ կը հասնի,

Այս լեռների խիզախ արքան օդաչու,

Արի, արծիւ, որ քո ազատ վէս հոգին

Տուիր բաժին բռնաւորին ցնորամիտ.

Զեն ահարկու քո նողկալի մագիներ,

Պռոմեթեսին գու չես ընկճիլ տանջելով:

Եւ գու, ով Զես, որ մահարեր շանթերիդ-

Ապաւինած սպաւնում ես ինձ խրոխտալով:

Տես, որ միայն արհամարհել գիտեմ ես

Քո բռնակալ անարդ հոգու չարութիւն:

Ծառայամիտ սպասարկուներն աթոռիդ

Հայր և արքայ թող տան, ով Զես, քեզ անուն,

Թող քո առաջ առատ կնդրուկ միշտ ծխեն, —

Զէ ահոելի քո զօրութիւնն ինձ համար.  
 Դու տիրացար իմ հէք մարմին անպաշտպան,  
 ինձ զոհ տուիր արենարբու այս արծուին,  
 եւ չեմ տեսնում տառապանքիս ես վախճան,  
 Բայց բռնութիւնդ էլ աւելի ոյժ չունի,  
 Սահմանն է այս արքայական զօրութեանդ . . .  
 Եւ միթէ դու կարծում էիր, թէ ազատ  
 Հոգու վերայ իշխել պիտի կարենաս,  
 Թէ կը փակես դու իմ շրթունք, որ մարդկանց  
 Քո ապիկար ու չարանենդ վարչութեան  
 Գաղտնի խորհուրդն ու նպատակ ցոյց տուին,  
 . . . Ա՞հ, դու խսպառ ինձ կործանել ես սպառնում,  
 Շանթ ու որոտ ես ուղարկում իմ գլխին.  
 Ահա լեռներ դղրգելով ահագին.  
 Զարհուրելի վիճ ես բանում ինձ համար . . .  
 Բայց դու գիտցիր, կործանելով իմ մարմին՝  
 Երբէք իմ գործն էլ ըսպանել չես կարող.  
 Մարդկանց աչքերն ես բաց արի, տուի լոյս  
 Նոցա խաւար, ըստրկացած խեղճ մտքին.  
 Եւ կը տեսնես, որ կը գայ օր, և նոքա,  
 Որ սարսափում, գողում էին առաջիդ,  
 Կը ծանակեն հպարտութեամբ քո շանթեր,  
 Եւ կ'իմանան, որ ամպերով միշտ ծածկուած  
 Գահդ անառակ պիղծ որջի մէջ է կանգնած . . .  
 Օրը կը գայ, կը խորտակուի Օլիմպոս,  
 Եւ լուսաւոր երկնքի տակ թև առած  
 Կը սաւառնի ազատութեան վեճ ոգին,  
 Թող յաւիտեան իմ տառապանքը տեի,  
 Բայց ես գիտեմ, կ'երթան, կ'անցնին սերունդներ,  
 Երկրի վերայ Զեսի անունն էլ չեն տայ,  
 Եսկ Պռոմեթես մարդկանց փրկիչ կը մընայ:

## 6. Յօվիաննիսեան.

